

ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԸ

Լրացավ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր Սարգիս Մելիքսեթյանի ծննդյան 80-ամյակը: Սարգիս Մելիքսեթյանը 1967 թվականից սկսած, որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, իր սրտագին և օգտակար ծառայությունն է բերել Նորին Սուրբ Օծության բոլոր ձեռնարկներին: Նրա ծառայությունը Մայր Աթոռում միշտ բարձր է գնահատվել Հայոց Հայրապետի կողմից՝ արժանանալով Նրա գնահատությանն ու օրհնությանը:

Սարգիս Մելիքսեթյանը ծնվել է 1899 թվականի սեպտեմբերի 5-ին Կիրովաբադում (Ադրբեջանական ՍՍՀ): Նրա ընտանիքը այնուհետև տեղափոխվել է Թիֆլիս, ուր և նա իր սկզբնական կրթությունը ստացել է տեղի մանկավարժներ Օրբելյանների պանսիոնում և ապա Ա. Մանթաշյանի անվան առևտրական դպրոցում:

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում միջնակարգ իր կրթությունը ստանալուց հետո, հետագա տարիներին հաճախում է Թիֆլիսի Ժողովրդական համալսարանի դասընթացներին:

Սկսած 1910-ական թվականների վերջերից Ս. Մելիքսեթյանը զբաղվում է գրական փորձերով և թատերական արվեստով: Քսանական թվականների սկզբից նա ակտիվորեն մասնակցում է այժմյան Գ. Սունդուկյանի անվան թատրոնի ստեղծագործական կյանքին և զբաղվում թատերական քննադատությամբ ու թատրոնի պատմության ուսումնասիրությամբ:

Երևանական թվականներին նրա նախաձեռնությամբ Երևանում կազմակերպվում է Հանրապետական թատերական տեխնիկումը, ինչպես նաև Հայաստանի թատերական թանգարանը: Նույն թվականներին նա բանաստեղծ ու հասարակական գործիչ Ազատ Վշտունու հետ հրատարակում է «Խորհրդային արվեստ» (ներկայիս «Սովետական արվեստ») ամսագիրը:

Ս. Մելիքսեթյանը մեծ աշխատանք է կատարել նաև մեր ազգային թատրոնի պատմությանը վերաբերող թատերական թանգարանի կազմակերպման գործում:

Ս. Մելիքսեթյանի վաստակը մեծ է նաև որպես դասախոս և մանկավարժ: Նա եր-

կար տարիներ դասախոսել է Երևանի թատերական տեխնիկումում, իսկ ապա նաև՝ թատերական ինստիտուտում, որի հիմնադիրներից մեկը եղել է ինքը:

Երկար տարիներ նա աշխատել է Հայաստանի արվեստի գործերի վարչությունում և մի շարք թատերագետների հետ հիմնել է թատերական ընկերությունը:

1956 թ. Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի կողմից նրան շնորհվել է Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչում և 1970 թ. պարգևատրվել է Գերագույն սովետի պատվոգրով:

1972 թ. մարտին նրան շնորհվել է արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան՝ «Սովետահայ թատրոնի պատմությունը» ուսումնասիրության համար:

Նա հեղինակ է նաև բազմաթիվ թատերագիտական արժեքավոր ուսումնասիրությունների և մենագրությունների:

1964 թվականից Ս. Մելիքսեթյանը նշանակվել է Եղիշե Չարենցի անվան Գրականության ու արվեստի հանրապետական թանգարանի դիրեկտոր:

Նույն թվականից Ս. Մելիքսեթյանը «Էջմիածին» ամսագրի խմբագրության առաջարկով եղել է նրա խմբագրական մարմնի անդամ և ապա կարճ ժամանակ հետո Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի կողմից հրավիրվել է անդամակցելու Գերագույն հոգևոր խորհրդին:

Սույն թվականի փետրվարի 29-ին, ուրբաթ օրը, Վեհարանի սեղանատանը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում ընդունելություն՝ ի պատիվ Սարգիս Մելիքսեթյանի ծննդյան 80-ամյակին:

Ճաշկերույթին հրավիրված էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի ու Մայր Աթոռին առընթեր Ճարտարապետների հանձնաժողովի անդամները և այլ հյուրեր:

Ճաշկերույթին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը:

Ճաշկերույթի ընթացքում ողջույնի և շնորհավորական ջերմ խոսք ասաց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը, շնորհավորելով հոբելյարին, գնահատեց նրա երկարամյա ծառայությունը, որպես «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի և ապա Գերագույն հոգևոր խորհրդի անդամի, և նրան պարգևատրեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով:

Սեղանի շուրջ հոբելյար Ս. Մելիքսեթյանին ողջույնի և շնորհավորական խոսք ասացին նաև տիար Ռ. Պարսամյանը, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Բ. Առաքելյանը, ժողովրդական նկարիչ Գ. Խանջյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրոֆ. Կ. Կարագյանը:

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ Սարգիս Մելիքսեթյանը:

Շնորհավորում ենք վաստակավոր արվեստաբանին և մաղթում նրան նորանոր հաջողություններ, երկար ու առողջ կյանք՝ իր գրական ու հասարակական գործունեության ասպարեզում:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ